

Հայաստանի Հանրապետության  
Քաղաքաշինության նախարարություն

Կոտայքի Կոշտ Կենցաղային  
Թափոնների Կառավարման  
Նախագիծ – Բնապահպանական  
և Սոցիալական  
Ուսումնասիրություն

Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր

Նոյեմբեր 2011թ.



COWI A/S

Parallelvej 2  
DK-2800 Kongens Lyngby  
Denmark

Tel +45 45 97 22 11  
Fax +45 45 97 22 12  
[www.cowi.com](http://www.cowi.com)

Հայաստանի Հանրապետության  
Քաղաքաշինության Նախարարություն

Կոտայքի Կոշտ Կենցաղային  
Թափոնների Կառավարման  
Նախագիծ – Բնապահպանական  
և Սոցիալական  
Ուսումնասիրություն

Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր

Նոյեմբեր 2011թ.

|               |             |
|---------------|-------------|
| Ծրագիր No.    | 75143-1-ENG |
| Դոկումենտ no. | 1           |
| Տարբերակ      | 04          |
| Ժամկետը       | 07.11.2011  |

|           |      |
|-----------|------|
| Պատրաստեց | LLA  |
| Ստուգեց   | CASK |
| Հաստատեց  | CASK |

## Բովանդակություն

|          |                                                                             |                              |
|----------|-----------------------------------------------------------------------------|------------------------------|
| <b>1</b> | <b>Ներածություն</b>                                                         | Error! Bookmark not defined. |
| <b>2</b> | <b>Նախագծի հրապարակման և հասարակական քննարկումների իրավական դաշտը</b>       | <b>7</b>                     |
| <b>3</b> | <b>Շահագրգիռ կողմերի իդենտիֆիկանիա</b>                                      | <b>12</b>                    |
| <b>4</b> | <b>Շահագրգիռ կողմերի ներգրավման նախորդ գործունեության համառոտ նկարագիրը</b> | <b>15</b>                    |
| 4.1      | Հանդիպումներ նախագծի ձևավորման ընթացքում                                    | 166                          |
| 4.2      | Տնտեսատեխնիկական հետազոտության սկիզբ                                        | 17                           |
| 4.3      | Հանդիպումներ տնտեսատեխնիկական հետազոտության ընթացքում                       | 17                           |
| <b>5</b> | <b>Նախագծի քննարկումներ և լուսաբանման ծրագիր</b>                            | <b>20</b>                    |
| 5.1      | Ծրագրի պլանավորման հանդիպում 2011թ.-ի մարտին                                | 20                           |
| 5.2      | Տեղեկատվության լուսաբանում էլեկտրոնային տարբերակով                          | 21                           |
| 5.3      | Հրապարակումներ ԶԼՄ-ներում                                                   | 21                           |
| 5.4      | Հեռախոսային կապ                                                             | 22                           |
| 5.5      | ՇՄՍԱԳ նախագծի շնորհանդես                                                    | 22                           |
| 5.6      | Տեղեկատվության լուսաբանում տպագիր օրինակով                                  | 23                           |
| 5.7      | ՇՄՍԱԳ-ի վերաբերյալ մեկնաբանությունների ընդունում և վերլուծություն           | 24                           |
| 5.8      | Տեղեկատվական և խորհրդատվական հանդիպումներ                                   | 24                           |
| 5.9      | Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը շինարարության և շահագործման ընթացքում  | 24                           |
| <b>6</b> | <b>Բողոքարկման մեխանիզմ</b>                                                 | <b>25</b>                    |
| 6.1      | Արտաքին շահագրգիռ կողմերի բողոքարկման մեխանիզմ                              | 26                           |

|     |                                                          |    |
|-----|----------------------------------------------------------|----|
| 6.2 | Ներքին շահագրգիռ կողմերի բողոքարկման մեխանիզմ            | 27 |
| 6.3 | Կապալառուների բողոքարկման մեխանիզմ                       | 32 |
| 6.4 | ՎԶԵԲ աշխատանքային պահանջներ՝ կապալառու շինարարների համար | 32 |

## Հավելվածներ

|                    |                                                                                                  |           |
|--------------------|--------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <b>Հավելված 1</b>  | <b>Կոտայքի մարզի ԿԿԹ նախագծի շահագրգիռ կողմերի ցուցակ</b>                                        | <b>34</b> |
| <b>Հավելված 2</b>  | <b>Տնտեսատեխնիկական հետազոտության գործադրմանը նվիրված հանդիպման մասնակիցների ցուցակ, Հրազդան</b> | <b>45</b> |
| <b>Հավելված 3</b>  | <b>Մարդկանց ցուցակը, որոնց հետ եղել են հանդիպումներ կայքի այցելությունների ժամանակ</b>           | <b>48</b> |
| <b>Հավելված 4</b>  | <b>Կոտայքի մարզի ԿԿԹ նախագծի շահագրգիռ կողմերի ներգրավվածության վերաբերյալ արձանագրություն</b>   | <b>51</b> |
| <b>Հավելված 5</b>  | <b>ԲՄՈւ ծրագրի պլանավորման հանդիպման մասնակիցների ցուցակ 16.03.2011</b>                          | <b>52</b> |
| <b>Հավելված 6</b>  | <b>Նախագծի վերաբերյալ ԶԼՄ-ներում արված հրապարակումների արձանագրություններ</b>                    | <b>56</b> |
| <b>Հավելված 7</b>  | <b>Մեկնաբանությունների և առաջարկությունների ձևաչաձ ՇՄՍԱԳ-ի բնթացքում</b>                         | <b>57</b> |
| <b>Հավելված 8</b>  | <b>Հասարակական բողոքարկման ձևաչափ</b>                                                            | <b>59</b> |
| <b>Հավելված 9</b>  | <b>Բողոքարկման ձև աշխատակիցների և ոչ-աշխատակիցների համար</b>                                     | <b>61</b> |
| <b>Հավելված 10</b> | <b>ՎԶԵԲ աշխատանքային պահանջներ՝ կապալառու շինարարների համար</b>                                  | <b>63</b> |

## 1 Ներածություն

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության Նախարարությունը («ՔՆ») դիմել է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին («ՎԶԵԲ» կամ «Բանկ») Կոտայքի մարզում տարածաշրջանային սանիտարական աղբավայր նախագծելու և ֆինանսավորելու խնդրանքով: Սա կլինի առաջին սանիտարական աղբավայրը երկրում: Կոտայքի տարածաշրջանը ընտրվել է Երևանին մոտ գտնվելու պատճառով՝ նպատակ ունենալով ստեղծել ցուցադրական նախագիծ ողջ երկրի համար (Պատկեր 1). Նախագիծը կմեղմացնի բնապահպանական վտանգը և կդիմակայի բացասական ազդեցությանը հողի և ջրային ռեսուրսների վրա: ՔՆ-ը նպատակ ունի կառուցել երկրին ծառայող յոթ տարածաշրջանային սանիտարական աղբավայր:




Պատկեր 1 Կոտայքի մարզը և Հայաստանի այլ մարզերը

Նախագիծը ներառում է կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի բարեփոխումներ: Բարեփոխումները կիրագործվեն Կոտայքի մարզի թափոնների կառավարման

համապատասխան պլավավորման հիման վրա (Պատկեր 1). Հաստատությունը կառուցելու ժամանակ ուշադրությունը պետք է կենտրոնացնել գործող ձեռնարկություն կառուցելուն և այն որպես հաստատուն կոմերցիոն միավոր զարգացնելուն: Հավաքման ծառայությունների վերահսկողությունը և թափոնների հավաքման մասնավոր մասնակցությունը կհաստատվեն մրցութային սկզբունքով:

Նախագիծը լինելու է ՎԶԵԲ-ի առաջին կոշտ կենցաղային թափոնների ծրագիրը Հայաստանում, և կլինի երկրում թափոնների կառավարման արդիականացման ազգային ծրագրի մասը: Առաջարկ է եղել Սևան քաղաքը, որը գտնվում է Գեգհարքունիքի մարզում, սակայն շատ մոտ Կոտայքի մարզի հյուսիսային սահմանին և գլխավոր ճանապարհին, նույնպես ներառել ծրագրի մեջ:

Ակնկալվում է, որ նախագիծը կունենա կարևոր ցուցադրական նշանակություն և կբարձրացնի հասարակության իրազեկությունը կոշտ կենցաղային թափոնների վերաբերյալ, ինչը կարևոր է ակնկալվող վճարների բարձրացումները ընդունելու համար:



Պատկեր 1 Կոտայքի մարզի քարտեզը

Ըստ ԲՄՈՒ պայմանագրի աշխատանքի նկարագրի Կոտայքի մարզում Կոշտ Կոնցաղային Թափոնների Կառավարման նախագծի իրականացվող հանձնարարության, Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիրը պետք է պատրաստվի ըստ ՎԶԵԲ-ի Բնապահպանական և Սոցիալական Տնտեսատեխնիկական Հետազոտության քաղաքականության (2008), մասնավորապես նրա Պահանջ 10-ը. ՎԶԵԲ-ի 2008թ.-ի Բնապահպանական և Սոցիալական քաղաքականությունն ու կատարման պահանջները հասանելի են՝ <http://www.ebrd.com/about/policies/enviro/policy/2008policy.pdf>. կայքում:



Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը նշանակում է հաստատուն հարաբերությունների կառուցում և պահպանում այն անձանց հետ, ովքեր տուժել են կամ հետաքրքրված են ՔՆ-ի Նախագծով և գործունեությամբ: ՇՆԾ տալիս է ՔՆ-ի և տարբեր շահագրգիռ կողմերի միջև կոմունիկացիայի ընդհանուր նկարագիրը նախագծի տարբեր փուլերում՝ ներառյալ ՇՄՄԱԳ և նախապատրաստական աշխատանքները, շինարարությունը, շահագործումը և փակումը: Այս կոմունիկացիան պետք է հեշտացնի գործընթացը նախագծի ողջ ընթացքում, մշակի և հետևի աշխատանքի լավագույն կատարմանը նախագծի յուրաքանչյուր փուլում:

ՇՆԾ –ի նպատակն է ժամանակին ապահովել համապատասխան և հասկանալի տեղեկատվությամբ և բոլոր շահագրգիռ կողմերին, ներառյալ նրանց, ովքեր պատկանում են խոցելի խմբերին և/կամ սոցիալապես անապահով խավերին, իրենց տեսանկյունները և մտահոգությունները արտահայտելու հնարավորություն տալ նախագծի հետ կապված, այնպես որ 8 քաղաքապետարանների կողմից հիմնադրված ԾԻԳ-ը կարողանա հաշվի առնել և արձագանքել դրանց:

**Այս ՇՆԾ-ն պետք է դիտվի որպես ակտիվ աշխատանքի փաստաթուղթ: Այն կվերանայվի և նախագծի կատարման ընթացքում: ՔՆ-ը կգնահատի ձեր առաջարկությունները ՇՆԾ-ի, ՔՆ-ի և շահագրգիռ կողմերի միջև շփման գործընթացի բարելավման հետ կապված:**

Որպես ծրագրի նախաձեռնող, ՔՆ-ը ներկայացնող կոնտակտային անձն է՝

Պրն. Ավագ Հակոբյան

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության փոխնախարար

Կառավարության շենք 3, Հանրապետության Հրապարակ, 0050 Երևան  
Հեռ: +374 10 56 51 31

Ֆաքս: +374 10 52 96 03

Էլ-փոստ: [av.hakobyan@mud.am](mailto:av.hakobyan@mud.am)



## 2 Նախագծի հրապարակման և հասարակական քննարկումների իրավական դաշտը

Տեղեկատվության հրապարակումը, հասարակական քննարկումները և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը ՎՁԵԲ-ը համարում է ընթացիկ գործընթաց, որը պետք է սկսվի նախագծի նախապատրաստական աշխատանքների սկզբնական փուլում և շարունակվի իրականացման ժամանակ:

ՇՆԾ-ը պետք է նախապատրաստվի և իրականացվի ՎՁԵԲ-ի Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության համապատասխան (2008), մասնավորապես նրա տեխնիկական պահանջ 10-ով և ՎՁԵԲ-ի Հասարակական Տեղեկատվության Քաղաքականության (2008)։

Հետևյալ միջազգային փաստաթղթերը նույնպես վերաբերում են ՇՆԾ-ի նախապատրաստմանը:

- ՄԱԿ-ի ԵՏՀ (Եվրապայի Տնտեսական Հանձնաժողով) Կոնվենցիան ինֆորմացիայի հասանելիության, որոշումներ կայացնելու հարցում հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության վերաբերյալ, և
- ԵԽ-ի Հրահանգ 85/337/EEC, որը լրացվել է Հրահանգ 97/11/EC-ով, շրջակա միջավայրի վրա որոշ հանրային և մասնավոր ծրագրերի հետևանքների գնահատման մասին:

Հայաստանը հանդիսանում է մի շարք կոնվենցիաների և միջազգային պայմանագրերի անդամ, որոնք տրամադրում են նախագծին համապատասխան հանրային քննարկումների հիմունքներ, ինչպես նաև հետևյալ համապատասխան գործողությունները.

- *Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման անդրսահմանային ենթատեքստի Կոնվենցիա* (Էսպո, 1991). Կոնվենցիայի համաձայն՝ կողմերը պետք է եթե չխոչընդոտեն,

ապա հնարավորինս նվազեցնեն վնասակար անդրսահմանային ազդեցությունը: Կոնվենցիայի պահանջների համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փաստաթուղթը պետք է ներառի տվյալ գործունեության նկարագրությունը, նրա նպատակները, ինչպես նաև տվյալ միջոցառումից հրաժարվելու տարբերակը, շրջակա միջավայրի օբյեկտները, որոնք ենթարկվում են բացասական ազդեցության, կանխարգելման միջոցառումների ցուցակ և այլն

- *Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անդրսահմանային ենթատեքստի կոնվենցիայի ռազմավարական շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պրոտոկոլ* (Կիեվ, 2003).

Պրոտոկոլը նախատեսում է իրականացնել ռազմավարական էկոլոգիական գնահատում (ՌԷԳ) և կողմերի պարտավորեցում ազգային և ռեգիոնալ մակարդակով: Այս պրոտոկոլի համաձայն՝ տարբեր ոլորտների զարգացման համար մշակված ծրագրերն ու նախագծերը և, եթե հնարավոր է, նաև քաղաքականությունն ու օրենսդրությունը ենթակա են ՌԷԳ-ին:

- *Անդրսահմանային ջրային ռեսուրսների և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման Կոնվենցիա*, 1992 (Հայաստանի կողմից չի ստորագրվել): Կոնվենցիան անդրադառնում է անդրսահմանային ազդեցության կանխարգելմանը, սահմանափակմանը և նվազեցմանը, անդրսահմանային ջրերի մոնիտորինգին, կանխարգելման արդյունավետ միջոցների հետազոտություն և զարգացում, անդրսահմանային ազդեցության սահմանափակում և նվազեցում:

- *Անդրսահմանային ջրային ռեսուրսների և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման Կոնվենցիայի Ջրի և առողջության պրոտոկոլ* (1999): Պրոտոկոլի նպատակն է տրամադրել բնակչությանը որակյալ ջուր, որը վտանգ չի ներկայացնում մարդկային առողջության համար, խմելու ջուրը բոլորին հասանելի դարձնել, իրականացնել սանիտարական պաշտպանիչ միջոցներ, ինչպես նաև էկոհամակարգերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

ՇՆԾ-ի նախապատրաստման համար նշանակություն ունեցող Հայաստանի իրավական և կարգավորիչ դաշտը հիմնված է հետևյալ հիմնական գործողությունների վրա.

- Օրենք շրջակա միջավայրի փորձաքննության/գնահատման մասին (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում):

- Կառավարության որոշումը բնապահպանական փորձաքննությանը ենթակա ծրագրված միջոցառումների մասին (N-139, 30 Մարտ-ի, 1999թ.).
- Օրենք տեղեկատվության ազատության մասին
- Օրենք բնակչության բնապահպանական կրթության մասին
- Օրենք պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաև պատմական միջավայրի պահպանման և օգտագործման:

1995թ.-ին շրջակա միջավայրի փորձաքննության մասին ընդունված օրենքը պարունակում է 48 տնտեսական միջոցառումների ցուցակ, որոնք ենթակա են փորձաքննության, այսինքն փորձագետի վերանայման: Օրենքը կարգավորում է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրավական, տնտեսական և ինստիտուցիոնալ ասպեկտները:

Հոդված 4-ի համաձայն, հետևյալ գործողությունները վերաբերում են ՇՄԱԳ –ին՝ կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտում.

- Վտանգավոր թափոնների հեռացում և վերամշակում;
- Թափոնների հեռացման օբյեկտների ստեղծում:

Հետագայում, ՇՄԱԳ-ի վերաբերյալ օրենքը սահմանում է նախատեսվող գործողությունների մասին ծանուցման ընթացակարգ (Հոդված 6): Երբ նախատեսվող գործունեության անդամը տեղեկացնում է իրավասու տեղական իշխանությանը, որը պատասխանատու է վարչական տարածքում բոլոր փորձագիտական ծրագրերի համար, որտեղ առաջարկվում է անցկացնել նախատեսված գործունեությունը, իրավասու մարմինը պետք է 7 օրվա ընթացքում տեղեկացնի տեղական համայնքին և 15 օրվա ընթացքում կազմակերպի հանրային լսումներ: Համայնքի կողմից մեկնաբանությունների բացակայությունը դիտարկվում է որպես դրական պատասխան իրավասու մարմիններին:

30 օրվա ընթացքում իրավասու մարմինը պետք է տեղեկացնի նախաձեռնող կողմին վերջնական որոշումը այն մասին, թե ՇՄԱԳ պետք է իրականացնել, թե ոչ:

Հաջորդ քայլը իրավասու մարմինների կողմից պահանջվող փաստաթերթի ներկայացնելն է, որը նա անմիջապես ուղարկում է «մարզի կամ համայնքի ղեկավարներին, համապատասխան պետական մարմին և տուժված համայնքին»:

5 օրվա ընթացքում համայնքները պատրաստվում են փաստաթղթերը հանրությանը ներկայացնել: Լսումները, որին մասնակցում են համայնքի ղեկավարները և ձեռնարկող կողմը, պետք է ավարտված լինեն 30 օրվա ընթացքում: Եթե տուժել է ավելի քան մեկ համայնք հասարական լսումների վայրը որոշում է իրավասու մարմինը:

Հանրային լսումների 10 օրերի ընթացքում համայնքների ղեկավարները ներկայացնում են հանրային կարծիքը իրավասու մարմիններին:

Բացի այդ, համապատասխան ազգային մարմինների կարծիքները պետք է ուղարկվեն իրավասու մարմիններին 30 օրվա ընթացքում՝ վերանայելու համար:

9-րդ հոդվածի համաձայն, փաստաթղթի գնահատման փորձագիտական բանաձևը (եզրակացությունը) պետք է կիրառվի իրավասու մարմինների կողմից հատուկ վկայականներ ստացած անձանց և/կամ իրավաբանական մարմինների կողմից: Փորձագիտական եզրակացությունը պետք է տրվի ՇՄԱԳ փաստաթղթերը ստանալուց 70 օր հետո՝ հաշվի առնելով նաև հանրության և համապատասխան հասարակական հաստատությունների կարծիքը: Պարզաբանումներ ստանալու նպատակով իրավասու մարմինը կարող է նշված ժամկետը երկարացնել մինչև 180 օր:

Փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում իրավասու մարմինը պետք է կազմակերպի հանրային լսումների երկրորդ փուլը: Հանրային լսումների 20 օրերի ընթացքում իրավասու մարմինը պետք է կատարի իր վերջնական որոշումը/բանաձևը գնահատման վերաբերյալ:

Սովորաբար գնահատման եզրակացությունը հանձնվում է ծրագրի նախաձեռնողին 120 օրերի ընթացքում: Փորձաքննության եզրակացությունը ուժի մեջ է տրման ամսաթվից:

Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների մասին օրենքը (1998թ.-ի Նոյեմբերին ընդունված) անդրադառնում է հետևյալ բնագավառներին. (i) պատմական և մշակութային հուշարձանների հասկացողություն, (ii) նրանց պահպանման և օգտագործման կարգը, (iii) հուշարձանների դասակարգումը, (iv) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները՝ հուշարձանների պահպանության և օգտագործման հետ կապված, (v) հուշարձանների պետական գրանցման կարգը: Այն ապահովում է հուշարձանների և պատմական

միջավայրի պահպանման հիմունքները, աջակցում հուշարձանների և հնագիտական պեղումների ուսումնասիրություններին:

Շահագրգիռ կողմերի ներգրավումն էլ և հանրային քննարկումների միջոցառումները նույնպես ներառված են Աղբավայրի Կառուցման և Շահագործման Ուղեցույցում, որը ընդունվել է Հայաստանի Քաղաքաշինության Նախարարության կողմից 2010թ.-ին:

### 3 Շահագրգիռ կողմերի իդենտիֆիկացիա

Շահագրգիռ կողմերը այն կազմակերպություններն ու անհատներն են, որոնք հետաքրքրված են, պատասխանատու են կամ տուժում են առաջարկվող նախագծից: Թափոնների հավաքման ծառայություններ մատուցող ձեռնարկությունների աշխատակիցները նախագծի ներքին շահագրգիռ կողմերն են: Մյուս մասնակիցները՝ արտաքին շահագրգիռ կողմերն են:

Շահագրգիռ կողմերի իդենտիֆիկացիան իրականացվում է նախագծի կազմավորման ընթացքում, տնտեսատեխնիկական հետազոտության և ՇՄԱԳ ժամանակ:

Շահագրգիռ կողմերի հետևյալ խմբերը բնութագրվել են այսպես.

- Միջազգային կազմակերպություններ – նրանց հիմնական ֆինանսավորման հաստատությունն է ՎԶԵԲ-ը, և այլ միջազգային կազմակերպություններ, որոնք աջակցում են Հայաստանում բնապահպանական և սոցիալ բարեփոխումներին ուղղված տարբեր միջոցառումների:
- Ազգային մինիստրություններ և այլ կառավարական հաստատություններ – նրանք ունեն ազգային իշխանությունների գործառույթներն ու պարտականությունները, որոնք կապված են ծրագրի նախապատրաստման, իրականացման և ռեպլիկացիայի հնառավորություն:
- Կոտայքի տարածքային կառավարման հաստատություններ – նրանք ունեն տարածաշրջանային իշխանությունների գործառույթներն ու պարտականությունները, որոնք կապված են ծրագրի նախապատրաստման և իրականացման հետ:
- Կոտայքի մարզի և Սևան քաղաքի քաղաքային և տեղական իշխանություններ:
- Կոտայքի մարզի և Սևան քաղաքի բնակիչներ – ակնհայտ է, որ քաղաքների և գյուղական տարածքների տեղական համայնքների

և անհատական տնային տնտեսությունների վրա կազդեն կոշտ կենցաղային թափոնների ոլորտի փոխությունները, ակնկալվող գնաբարձրացումը, բայց կունենան բարելավված սպասարկում և այդպիսով կդառնան նախագծի շահառուները; հատուկ ուշադրություն պետք է դարձնել առավել խոցելի խմբերի շահերին:

- Հողատերեր/հողօգտագործողներ և աղբավայրի տեղանքին մոտ գտնվող բնակավայրերի բնակիչներ – նրանց վրա կազդեն տարածաշրջանային աղբավայրի կառուցման և շահագործման հետ կապված միջոցառումները:
- ՀԿ-ներ - մի շարք տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններ ունեն Հայաստանի տարբեր մարզերում թափոնների կառավարման և հանրային քննարկումների գործունեության արժեքավոր փորձ և ցուցաբերել են հետաքրքրություն ծրագրին:
- Հայկական խորհրդատվական ընկերություններ, հետազոտական կենտրոններ – նրանք զբաղվում են Հայաստանում քաղաքային տարածքների հատակագծերի մշակմամբ, տարբեր ծրագրերի նախապատրաստմամբ և ուսումնասիրությամբ, ինչպես նաև թափոնների կառավարման ծրագրերով:
- Հասարակությունը – որպես Հայաստանում սանիտարական աղբավայր կառուցելու միջազգային փորձնական ծրագիր, Կոտայքի մարզի Նախագիծը կարող է հետքերել այլ մարզերի հասարակությանը; միևնույն ժամանակ Նախագիծը կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել Կոտայքի մարզը և Սևան քաղաքը այցելող տուրիստներին՝ բիզնեսի զարգացման համար, լրացուցիչ շահագրգիռ կողմերի իդենտիֆիկացիայի համար (օրինակ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ վերամշակողներ):
- Զանգվածային լրատվամիջոցներ – Հայաստանի ԶԼՄ-ները սովորաբար ակտիվ են հասարակությանը հետաքրքրող միջազգային ծրագրերի վերաբերյալ ցանկացած նորություններ ձեռք բերելու և ներկայացնելու հարցում:
- Կապալառուներ և մատակարարներ – տարբեր շինարարական ընկերություններ և սարքավորումների մատակարարներ կարող են շահագրգռված լինել նախագծով, որպես նրանց համար աշխատանքի հնարավորություն է ստեղծում:
- Կոտայքի մարզի և Սևան քաղաքի թափոնների կառավարման ընկերությունների աշխատակազմ – ընկերությունները կմասնակցեն թափոնների կառավարման ոլորտի



արդիականացմանը և բարեփոխմանը, այնպես որ նրանց աշխատակազմը ինֆորմացիայի կարիք կունենա:

Իդենտիֆիկացված շահագրգիռ կողմերի ցուցակը և նրանց կոնտակտային տվյալները ներկայացված են Հավելված 1-ում:

Նախագծի պատրաստման և իրագործման ընթացքում տարբեր շահագրգիռ կողմերի կազմն ու պարտականությունները կենթարկվեն որոշակի փոփոխությունների: Օրինակ, աղբավայրի կառուցմանը մասնակցող կապալառուների աշխատակազմը և ապագա տարածաշրջանային աղբավայրը շահագործող ձեռնարկության աշխատակազմը պետք է նույնպես դիտարկվեն որպես Նախագծի ներքին շահագրգիռ կողմեր:

Տվյալ փաստաթղթի հաջորդ երկու գլուխները տեղեկություն են տրամադրում շահագրգիռ կողմերի ներգրավման արդեն ձեռնարկված և հետագա գործունեության վերաբերյալ:

#### 4 Շահագրգիռ կողմերի ներգրավման նախորդ գործունեության համառոտ նկարագիր

Առաջարկվող Նախագիծը հիմնված է ՔՆ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ քաղաքաշինական գործընթացի վրա, որը համագործակցում է Հայաստանի քաղաքապետարանների համար գլխավոր հատակագծեր նախագծող այլ մինիստրությունների և խորհրդատվական ընկերությունների հետ: Ներկայումս գլխավոր հատակագծերը հասանելի են Կոտայքի մարզի այն համայնքների համար, որոնք ներկայացված են Աղյուսակ 3.1:

Table 3.1 Քաղաքաշինության գլխավոր հատակագծերը Կոտայքի մարզի համայնքների համար, մինչ 2011թ. -ի մարտ:

| No | Համայնք          | ՀՀ Կառավարության կողմից հատակագծի հաստատման ամսաթիվը |
|----|------------------|------------------------------------------------------|
| 1  | Գյուղ Հանքավան   | 19.01.2006                                           |
| 2  | Գյուղ Արզական    | 19.01.2006                                           |
| 3  | Գյուղ Արզնի      | 19.01.2006                                           |
| 4  | Գյուղ Արտավազ    | 19.01.2006                                           |
| 5  | Քաղաք Չարենցավան | 30.11.2006                                           |
| 6  | Քաղաք Եղվարդ     | 09.08.2007                                           |
| 7  | Քաղաք Աբովյան    | 09.08.2007                                           |
| 8  | Քաղաք Հրազդան    | 21.12.2007                                           |
| 9  | Քաղաք Գառնի      | 27.12.2007                                           |
| 10 | Քաղաք Ծաղկաձոր   | 16.06.2006                                           |

|    |                |            |
|----|----------------|------------|
| 11 | Գյուղ Ջրվեժ    | 02.07.2009 |
| 12 | Քաղաք Նոր Հաճն | 07.11.2001 |

Նախագիծը ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորման համար նախապատրաստելու ընթացքում ՔՆ իրականացրել է մի շարք քննարկումներ ազգային, տարածաշրջանային և քաղաքային իշխանությունների հետ:

Տեղի ՀԿ-ները ունեն Հրագրանում և Կոտայքի մարզի այլ քաղաքներում հասարակության իրազեկվածության բարձրացման քարոզարշավների փորձ: Կոշտ կենցաղային թափոնների կառավարումը հանդիսանում է ՀԿ-ների առաջնահերթ գործունեություն: ՀԿ-ներն ունեն հանրային հանդիպումների, հասարակական հարցումների փորձ, բնապահպանական հաղորդումներ հեռուստաալիքներով և հեռուստաալիքների հետ համագործակցում, թեժ գծեր: Հետևյալ ՀԿ-ները (տրվում է կազմակերպության նախագահների անունների հետ միասին) վերջին տարիներին մասնակցել են Կոտայքի մարզում բնապահպանական միջոցառումներին.: “ Մարդու իրավունքների պաշտպանության Հրագրանի գրասենյակ” (Կ. Առաքելյան), “Քաղաքացիական Ակադեմիա” (Ջ. Բուբուշյան), “Երեխաների աջակցության հիմնադրամ” (Կ. Առաքելյան), “Առաքելություն Հայաստան” (Վ. Մամիկոնյան), “Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա” Հրագրանի մասնաճյուղ (Ն. Հակոբյան), “Հայ օգնության միություն” Հրագրանի մասնաճյուղ (Ջ. Քոչարյան), “Վառվող աստղ” (Ջ. Վարդանյան), “Հանրապետական կանանց խորհուրդ”( Ջ. Ուսանյան), “Անտառները սերունդների համար”(Գ. Առաքելյան):

Բնապահպանական հասարակական տեղեկատվական կենտրոնը (Օրիուս կենտրոն) Հրագրանում գործում է 2007թ.-ից ԵԱՀԿ-ի ֆինանսական հովանավորությամբ:

#### 4.1 Հանդիպումներ նախագծի ձևավորման ընթացքում

Աբովյանի, Բյուրեղավանի, Չարենցավանի, Հրագրանի և Եղվարդի հիմնական աղբավայրերի ուսումնասիրությունները, հանդիպումները Կոտայքի մարզի տարածքային կառավարման մարմինների և հինգ քաղաքապետարանների ղեկավարների հետ տեղի են ունեցել 2008թ.-ի սեպտեմբերին՝ ՎԶԵԲ-ի նախագծի ձևավորման առաքելության ընթացքում, որն իրականացվել է միջազգային խորհրդատուի մասնակցությամբ:

Նախագծի մասին տեղեկատվությունը 2009թ.-ին տեղադրվել է ՎԶԵԲ-ի կայք՝ երկու առաջադրանքների բաժանված խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ հետաքրքրվածություն արտահայտելու կոչով. Տնտեսատեխնիկական հետազոտություն և Բնապահպանական և Սոցիալական աուդիտ: Տնտեսատեխնիկական հետազոտությունը սկսվել է 2010թ.-ի օգոստոսին: Բնապահպանական և Սոցիալական աուդիտը սկսվել է 2011թ.-ի մարտին: COWI A/S Դանիական խորհրդատվական ընկերությունը «Տրանսնախագիծ» ՓԲԸ-ի և «ԷկոԳլոբ» ՀԿ-ի հետ համատեղ հաստատվել են, որպես նախագծի խորհրդատուներ:

## 4.2 Տնտեսատեխնիկական հետազոտության սկիզբ

Տնտեսատեխնիկական հետազոտությունը սկսելու ընթացքում անց է կացվել երեք հանդիպում շահագրգիռ կողմերի հետ: Հանդիպումներից մեկը անց է կացվել Երևանում, իսկ երկուսը կազմակերպվել են Հրազդանում՝ ՔՆ-ի և Կոտայքի Մարզպետարանի կողմից:

Առաջին հանդիպումը, որը վարում էր Քաղաքաշինության Նախարարի տեղակալ պրն. Ա. Հակոբյանը, Երևանում կայացել է 03.08.2010թ.-ին ՔՆ-ի գրասենյակում՝ Կոմունալ ծառայությունների բաժնի, ՎԶԵԲ-ի ներկայացուցիչ պրն. Լ. Շարվաձեի, Կոտայքի մարզպետի տեղակալ՝ պրն. Ա. Ղազարյանի, Կոտայքի մարզպետարանի Կոմունալ բաժնի պետ՝ պրն. Ա. Խաչատրյանի, Կոտայքի մարզպետարանի Բնապահպանության բաժնի պետ՝ պրն. Կ. Թումոյանի և խորհրդատուի թիմի մասնակցությամբ:

Երկրորդ հանդիպումը կայացել է Կոտայքի մարզպետ՝ Կովալենկո Շահգալոյանի հետ: Մարզպետը ներկայացրեց մարզը և մարզպետարանի առաջնահերթ խնդիրները, ողջունեց տնտեսատեխնիկական ուսումնասիրության թիմին:

Երրորդ հանդիպումը կազմակերպվել է Հրազդանում՝ ՔՆ-ի և Կոտայքի մարզի քաղաքային համայնքներում թափոնների կառավարումն իրականացնող աշխատակազմի ներկայացուցիչների հետ: Հանդիպման մասնակիցների ցուցակը ներկայացված է Հավելված 2-ում: Ծրագիրը ներկայացվեց և քննարկվեցին տարածաշրջանային սանիտարական աղբավայրի կառուցմանը համապատասխանող տարածքի վերաբերյալ հարցերը:

## 4.3 Հանդիպումներ տնտեսատեխնիկական հետազոտության ընթացքում

Տնտեսատեխնիկական հետազոտության ընթացքում խորհրդատուի թիմը իրականացրել է տեղանքի ուսումնասիրություններ և կայացրել

մի շարք հանդիպումներ Կոտայքի մարզի խոշոր քաղաքներում և Սևանում թափոնների կառավարմամբ զբաղվող ձեռնարկությունների հետ: Հանդիպման ընթացքում անցկացվել են հարցազրույցներ՝ յուրաքանչյուր կոնկրետ քաղաքապետարանի և նրա թաղամասերի թափոնների կառավարման փորձի վերաբերյալ մանրամասն տեղեկություն հավաքելու համար, ինչպես նաև կարծիքների փոխանակում:

Կայքի այցելության ժամանակ քննարկված առանցքային հարցերից էին տարածաշրջանային սանիտարական աղբավայրի տեղանքի ընտրությունը, դեպի աղբավայր թափոնների տեղափոխման տարբերակները և հնարավոր այլընտրանքային տարբերակների որոշումը:

Այն անձանց ցուցակը, որոնց հետ եղել են հանդիպումներ կայքի այցելության ընթացքում, ներկայացված է Հավելված 3-ում:

Կայքի այցելությունների արդյունքները ներկայացված են “Տնտեսատեխնիկական հետազոտության նախնական զեկույցում” և “Աղբավայրի տեղանքի ընտրության զեկույցում”: Նախագծի և նրա այլընտրանքային տարբերակների համառոտ տեխնիկական նկարագիրը ներկայացված է “Ամփոփիչ հաշվետվության” մեջ: Հետևյալ հիմնական հարցերն են քննարկվել տեղանքի այցելության ժամանակ:

- Զրոյական տարբերակ (ոչ մի փոփոխություն ներկայիս թափոնների կառավարման համակարգում);
- Խառը կոմունալ կոշտ կենցաղային թափոնների հավաքման բարելավված համակարգ և թափոնների տեղափոխում անմիջապես տարածաշրջանային սանիտարական աղբավայր:
- Խառը կոմունալ կոշտ կենցաղային թափոնների հավաքման բարելավված համակարգ և թափոնների տեղափոխում անմիջապես տարածաշրջանային սանիտարական աղբավայր՝ թափոնների տեղափոխման կայան(ներ)ի միջոցով:
- Թափոնների տեսակավորման մի շարք տարբերակներ և հումքի և էներգիայի վերականգնում:
- Ավելի վաղ Հայաստանում և այլ երկրներում թափոնների կառավարման նախագծերից քաղված դասեր:

Տեխնիկական, կազմակերպական, բնապահպանական, սոցիալական և տնտեսագիտական դիտարկումների հիման վրա ընտրված

Նախընտրելի տարբերակի մանրամասն տեխնիկական նկարագիրը կներկայացվի “Նախագծի առաջարկում”, որը նախատեսվում է ավարտին հասցնել 2011թ.-ի Հուլիսին: Նախագծի վերաբերյալ զեկույցները կամ նրանց համառոտ նկարագրերը կլինեն հասանելի հասարակությանը ՔՆ-ի միջոցով: ՇՄՄԱԳ-ի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի կլինեն մեկնաբանությունների համար հանրային քննարկումների ընթացքում:

## 5 Նախագծի քննարկումները և լուսաբանման ծրագիր

Որպես նախագծի կողմնակից ՔՆ-ը պետք է համոզված լինի, որ Կոտայքի մարզի և Սևան քաղաքի տուժած բնակչությունը, տեղի համայնքային կազմակերպությունները, ՀԿ-ները, տեղի կռավարական գործակալությունները տեղեկացված են Նախագծի մասին և ներգրավված են գործընթացի մեջ, հիմնախնդիրների բացահայտման և այլընտրանքային քարտեռակների որոնման գործում:

Այս ներգրավվածությունը հատկապես կարևոր է ՇՄՍԱԳ-ի գործընթացում, ինչը թույլ կտա ներառել համապատասխան առաջարկները ծրագրի նախագծում: Այնուամենայնիվ, ծրագրի հետ կապված տեղեկատվական և խորհրդատվական գործունեությունը կիրականացվի նաև նախագծի նախապատրաստման և իրականացման այլ փուլերում:

Շահագրգիռ կողմերին տրամադրվող տեղեկատվությունը պետք է բավարար լինի նկարագրելու համար առկա, թե ինչ փոփոխություններ է առաջացնելու նախագիծը, որտեղ են ակնկալվում այս փոփոխությունները և եբբ են սպասվում:

Նախագծի յուրաքանչյուր փուլի և յուրաքանչյուր շահագրգիռ կողմի կամ խմբի համար ՇՆԾ ապահովում է համապատասխան տեղեկատվություն և խորհրդատվական գործունեություն: ՔՆ-ը կհետևի շահագրգիռ կողմերի գործունեությանը:

### 5.1 Նախագծի պլանավորման հանդիպում 2011թ.-ի մարտին

Պլանավորումը դա գործընթաց է, երբ որոշվում են կարևոր խնդիրները և այլընտրանքային տարբերակները, որոնք պետք է ուսումնասիրվեն ՇՄՍԱԳ-ի ժամանակ: ՔՆ-ը կազմակերպել է հանդիպում նախագծի մի շարք շահագրգիռ կողմերի հետ, որոնք կապ ունեն ՇՄՍԱԳ-ի գործընթացի բացահայտման հետ: Նախագծի պլանավորմանը նվիրված հանդիպման մասնակիցների ցուցակը ներկայացված է Հավելված 5-ում:

Հանդիպման ժամանակ առաջ քաշվեցին տեղի շահագրգիռ կողմերի հետաքրքրությունները նախագծի տարբեր բնագավառներին վերաբերող: Հանդիպման ընթացքում մասնակիցների տված հարցերի համառոտագրությունը է “Բացահայտման զեկույցում”: Հանդիպման ժամանակ քննարկված հարցերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված կլինի ՇՄՄԱԳ-ի Նախագիծ փաստաթղթում:

## 5.2 Տեղեկատվության լուսաբանում էլեկտրոնային տարբերակով

Նախագծի և համապատասխան փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված կլինի ՔՆ-ի կայքում անգլերեն և հայերեն լեզուներով [www.gov.mud.am](http://www.gov.mud.am) և Կոտայքի Մարզպետրանի կայքում հայերեն լեզվով [www.region.kotayk.am](http://www.region.kotayk.am). Բացի այդ, մի կայքից կլինի հղում դեպի մյուս կայք:

Ըստ հարցման էլ-փոստով կտրամադրվեն փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները (PDF ֆայլեր):

## 5.3 Հրատարակումներ ԶԼՄ-ներում

Կոտայքի մարզի զանգվածային լրատվամիջոցների ծածկույթի մասին տեղեկատվությունը փաստում է, որ Հայաստանի թերթերը ռաքվում են մասնավորապես Երևան և չունեն լսարան Կոտայքի մարզի քաղաքներում և գյուղական համայնքներում, տեղի քաղիոկայանները հիմնականում թողարկում են երաժշտական հաղորդումներ, ուստի տարածքային իշխանությունները և ՀԿ-ները առաջարկում են միայն տեղական հեռուստաընկերությունները, որոնք պարբերաբար ներկայացնում են տեղական նորություններն ու տեղեկատվությունը Կոտայքի մարզի հանրությանը: Քաղաքների և գյուղական համայնքների բնակչության մեծամասնությունը ունի հեռուստացույց տանը և դիտում է տեղական լրատվական ծրագրերը:

Ըստ [www.mediaforum.am](http://www.mediaforum.am) ինտերնետային կայքի, տեղի հեռուստաընկերությունները հեռարձակվում են Հրազդանում, Նոր Հաճնում, Չարենցավանում և Սևան քաղաքներում:

Ինտերնետային լրատվական գործկալությունները Հայաստանում հաճախ տրամադրում են տեղեկատվություն հիմնական բնապահպանական հրցերի վերաբերյալ տարբեր մարզերում: Հետևյալ կայքերում կարելի է տեղադրել տեղեկատվություն նախագծի վերաբերյալ:

- [Armregions.am](http://Armregions.am);



- Armenpress.am;
- Aysor.am;
- News.am;
- A1plus.am;
- Armenianow.com.

Նախագծի վերաբերյալ հրապարակումների գրառումները կարելի է վարել Հաշվետվություն 6-ի ձևաչափով:

## 5.4 Հեռախոսային կապ

Հայաստանում մարդիկ սովորաբար նախընտրում են հարցեր տալ և մտքերն արտահայտել հեռախոսով: Նախագծի պլանավորման աշխատանքների և լրացուցիչ ինֆորմացիայի հարցերով կարելի է դիմել հետևյալ հեռախոսահամարներով.

Միհրան Միքայելյան  
Հրազդանի քաղաքապետի տեղակալ  
Հեռ.: 374 223 2 39 64; 374 223 2 23 45

Կոտայքի մարզպետարան, Քարտուղարություն: +374 223 2 37 13

Նախագծի կառույցի շինարարության և շահագործման փուլում մեկնաբանությունները, հարցերը և հնարավոր բողոքները կուղղվեն Բողոքարկման մեխանիզմի միջոցով, ինչպես նկարագրված է Գլուխ 6-ում:

## 5.5 ՇՄՍԱԳ նախագծի շնորհանդես

ՇՄՍԱԳ նախագիծը պլանավորված է ավարտին հասցնել 2011թ.-ի հունիսին: Վերջնական արդյունքները կներկայացվեն շահագրգիռ կողմերի քննարկմանը ՔՆ-ի հետ հանդիպման ժամանակ: Հանդիպումը փորձնականորեն նշանակված է հունիսի 23 կամ 24-ին: ՇՄՍԱԳ ոչ տեխնիկական ամփոփագիրը (ՈՏԱ) մասնակիցներին կներկայացվի անգլերեն և հայերեն լեզուներով:

ՈՏԱ-ն բաղկացած է լինելու հետևյալ բաժիններից.

- ՇՄՍԱԳ ամփոփագիր՝ նոր համալրումների վերաբերյալ [ինչպես նաև ընթացիկ գործողությունների հետ կապված հարցեր]:
- Պոտենցիալ կուտակային ազդեցությունների ամփոփում, որոնք կապված են ինչպես նոր, այնպես էլ առկա օբյեկտների հետ:
- ԲՄԳԾ ամփոփագիր՝ նոր օբյեկտների համար: Բացի այդ, ԲՄԳԾ նոր օբյեկտների համար պետք է կցված լինի ՈՏԱ-ին:

- ՇՆԾ ամփոփագիր:

ՈՏԱ –ն ընդհանուր առմամբ չի գերազանցի 20 էջը: Այն գրվելու է պարզ հասանելի լեզվով և կներառի համապատասխան տերմինների բառացանկ: ՈՏԱ-ի հայերեն տարբերակը կտեղադրվի ՔՆ-ի [www.gov.mud.am](http://www.gov.mud.am) և Կոտայքի մարզպետարանի [www.region.kotayk.am](http://www.region.kotayk.am) ինտերնետային կայքում:

ՇՄՄԱԳ նախագիծը հայերեն և անգլերեն լեզուներով պատրաստ կլինի 2011թ.-ի հուլիսին և կներկայացվի ՔՆ-ին և ՎԶԵԲ-ին մեկնաբանությունների և հետագա հանրային քննարկումների համար:

## 5.6 Տեղեկատվության լուսաբանում տպագիր օրինակով

ՇՄՄԱԳ փաստաթղթերի տպագիր օրինակները հայերեն և անգլերեն լեզուներով հասանելի կլինեն աշխատանքային ժամերին Հրազդանի քաղաքապետի գրասենյակում:

ՈՏԱ-ի տպագիր օրինակները հայերեն լեզվով հասանելի կլինեն ընթերցանության համար Աբովյանի, Բյուրեղավանի, Չարենցավանի, Նոր Հաճնի, Սևանի, Ծաղկաձորի և Եղվարդի քաղաքապետարաններում:

ՇՄՄԱԳ փաստաթղթերի տպագիր օրինակները կտրամադրվեն ըստ պահանջի՝ պատճենահանման արժեքի դիմաց:

Նախագծի վերաբերյալ տպագրված տեղեկատվությունը կտրամադրվի բոլոր տնային տնտեսություններին՝ կոմունալ ծառայությունների դիմաց հաշիվների հետ համատեղ:

Նախագծի մասին պաստառները, տեղեկատվական վահանակները, ինչպես նաև գովազդային բուկլետները ստեղծվեն Ծրագրում մասնակցող 8 քաղաքների քաղաքապետարաններում:

Նախագծի վերաբերյալ տեղեկատվական բուկլետները նաև կտարածվեն քաղաքներում և գյուղական տարածքներում թափոնների կառավարման ձեռնարկությունների աշխատակազմի միջոցով (աղբահավաք մեքենաների վարորդներ):

### **5.7 ՇՄՍԱԳ-ի վերաբերյալ մեկնաբանությունների ընդունում և վերլուծություն**

ՇՄՍԱԳ մեկնաբանությունները և առաջարկությունները կընդունվեն հանրային քննարկումների ընթացքում՝ Հավելված 7-ում ներկայացված ձևաչափով: Ստացված լրացված ձևերը կընդգրկվեն մեկնաբանությունների գրանցամատյանում, որը վարում է ՔՆ-ի կողմից նշանակված աշխատակազմը:

Գրավոր մեկնաբանություն թողնելուց մեկ շաբաթ անց հեղինակը կտեղեկացվի (եթե կոնտակտային տվյալները առկա են) ներկայացված մեկնաբանությունը ստանալու մասին: ՔՆ-ի աշխատակազմը կհոգա համապատասխան մեկնաբանությունները ՇՄՍԱԳ և/կամ Նախագծային փաստաթղթեր ուղղելու մասին:

### **5.8 Տեղեկատվական և խորհրդատվական հանդիպումներ**

Հանրային հանդիպումները կազմակերպվելու են համայնքներում, երբ անհրաժեշտ է հասարակությանը նախատեսված փոփոխությունների մասին տեղեկատվություն հաղորդել և ստանալ դիտողություններ:

### **5.9 Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը շինարարության և շահագործման ընթացքում**

ՇՆԾ-ը պետք է ժամանակ առ ժամանակ վերանայվի և նորացվի՝ շինարարության տարբեր փուլերում շահագրգիռ կողմերի համապատասխան ներգրավվածություն ապահովելու համար, կարգաբերում և նախագծի օբյեկտների շահագործում:

Առողջապահական, անվտանգության, բնապահպանական և սոցիալ հարցերի վերաբերյալ ամենամյա հաշվետվությունները կհրապարակվեն յուրաքանչյուր հաջորդ տարվա առաջին քառորդում: Այս հաշվետվությունները կտեղադրվեն ինտերնետային կայքերում (օրինակ՝ Կոայքի մարզի տարածաշրջանային սանիտարական աղբավայրը շահագործող ձեռնարկության ինտերնետային կայքում) և կներկայացվեն համապատասխան բնապահպանական մարմիններին: Հաշվետվությունները պետք է ներառեն տեղեկատվություն նախագծի հետ կապված բողոքարկումների վերաբերյալ: Բողոքարկման մեխանիզմը նկարագրված է հաջորդ գլխում:

## 6 Բողոքարկման մեխանիզմ

Նախագծի բոլոր փուլերում (տնտեսատեխնիկական հետազոտության նախապատրաստում, ՇՄՄԱԳ գործընթաց, շինարարություն, շահագործում և պահպանում, փակումը և հետագա խնամքը) նախագծի շահագրգիռ կողմերը պետք է հնարավորություն ունենան ներկայացնել իրենց մեկնաբանությունները, բողոքները և անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն և արձագանքներ ստանալ համապատասխան հետադարձ ճանապարհի միջոցով: Միջոցներն ու հաղորդակցության գործընթացը բողոքարկման մեխանիզմի բաղադրիչներն են, որոնք պետք է նախագծի ընթացքում հաստատվեն և հայտարարվեն: Մեխանիզմը կարող է ճշգրտվել նախագծի ընթացքում: Այս դեպքում ցանկացած փոփոխությունների ենթարկված տեղեկատվությունը պետք է տրամադրվի շահագրգիռ կողմերին:

“Բողոքարկում” տերմինը ենթադրում է, որ հնարավոր են բարդույթներ: Այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ հաճախ համայնքները նպատակահարմար են գտնում կիրառել նույն ճանապարհները ոչ միայն բողոքարկման, այլ նաև հարցերը, տեղեկատվության հարցումները և առաջարկները հաղորդելու համար: Այս միջոցով համայնքները կարող են փոխանցել նաև դրական կարծիքները:

Նախագծի կողմնակիցը պետք է հիշի, որ անպատասխան հարցերը կամ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումների անտեսումը պրոբլեմ դառնալու վտանգ ունեն, հետևաբար պետք է անհապաղ կերպով մշակվեն: Անձը (անձիք), որը հարց է ուղղել կամ հարցում, պետք է տեղեկացված լինի, թե ով է պատասխանելու և մինչև երբ:

ՇՆԾ նախագիծը ներառում է արտաքին ու ներքին շահագրգիռ կողմերից բողոքարկումները ստանալու և մշակելու մեխանիզմներ:

### 6.1 Արտաքին շահագրգիռ կողմերի բողոքարկման մեխանիզմ

Արտաքին շահագրգիռ կողմերի բողոքարկման մեխանիզմը գործընթաց է, որը հիմնականում կենտրոնացած է տուժած համայնքներից նախագծին վերաբերող բողոքարկումները ստանալու, գնահատելու և մշակելու վրա: Բողոքարկման մեխանիզմը տարբերվում է վեճերի լուծման այլ ձևերից (օրինակ, դատարաններ, կառավարական համակարգեր և այլն) նրանով, որ տալիս է խնդիրները տեղական մակարդակի վրա, պարզեցված և փոխշահավետ տարբերակով լուծելու հնարավորություն՝ նախագծի և համայնքի շփման շրջանակներում:

Պատշաճ կերպով նախագծված և իրականացված բողոքարկման մեխանիզմի գործընթացները կարող են օգտակար լինել նախագծի և համայնքների համար՝ բարձրացնելով մանր վեճերի արագ, ոչ թանկ և արդար լուծելու հավանականությունը: Լուծումները ողջամտորեն կգոհացնեն երկու կողմերին էլ, առանց ուղղելու բողոքարկումները վեճերի լուծման մեկ այլ (պաշտոնական) մարմնի: Բողոքարկման մեխանիզմները կարող են օգնել բացահայտել և լուծում տալ խնդիրներին քանի դեռ դրանք չեն հասել պաշտոնական լուծման մակարդակի, ինչպես նաև դատարաններ:

Որպեսզի բողոքարկման մեխանիզմը արդյունավետ գործի, կարևոր է սահմանել բողոքարկումների մշակման կառուցվածքը, ինչպես նաև սահմանել մեխանիզմի իրականացման պարտավորվածություններ և պարզ դարձնել շահագրգիռ կողմերի համար:

Նախագծի արտաքին շահագրգիռ կողմերի հարցերի, բողոքների և առաջարկությունների համար կոնտակտային տվյալներն են.

Պրն. Միհրան Միքայելյան

Հրազդանի քաղաքապետի տեղակալ

Կենտրոն թաղամաս, Հրազդան, Հայաստան

Հեռ: +374 223 2 39 64; 374 223 2 23 45

Էլ-փոստ: [info@hrazdan.am](mailto:info@hrazdan.am)

Հասարակական բողոքարկումների փաստաթղթի ձևը ներառված է Հավելված 8.

Այն, որ տուժած համայնքների կարիքները բողոքարկման մեխանիզմի ուշադրության կենտրոնում են, պայմանավորված է փաստով, որ նրանք անմիջականորեն, իսկ որոշ դեպքերում զգալիորեն տուժում են նախագծի գործունեությունից, նաև նրանց խնդիրները պաշտոնական կառույցներում չեն կարող բարձրացվել: Սա հատկապես վերաբերում է համայնքի անապահով խմբերին: Նախագծի բողոքարկման

մեխանիզմը առաջարկում է համայնքներին հարցերի մշակման մատչելի միջոց՝ ներգրավելով նրանց և ձեռնարկությունը՝ ուղղակորեն, շատ արագ և անվճար:

Որպեսզի բողոքարկման մեխանիզմը լինի արդյունավետ, բոլոր շահագրգիռ կողմերը պետք է հասկանան և աջակցեն նրա նպատակին: Տուժած համայնքները պիտի տեղեկացված լինեն և հասկանան բողոքարկման մեխանիզմի օգուտները:

Տեղական համայնքների վրա նախագծի ազդեցությունից կախված՝ բողոքարկումները կփոփոխվեն նախագծի տարբեր փուլերում: Շատ դեպքերում, նախաշինարարական փուլում բողոքարկումները նվազագույն են, այնուհետև շինարարության ժամանակ հասնում են իրենց առավելագույնին, և կլինեն համեմատաբար չափավոր շահագործման կամ փակման ժամանակ: Սովորաբար կառուցման փուլի ժամանակ ազդեցությունների մասշտաբները ավելանում են, և աճում են համայնքների տնտեսական օգուտների ակնկալիքները:

Նախագծի բողոքարկման մեխանիզմը պետք է գործ ունենա չնախատեսված բողոքարկումների տեսակների հետ: Նախագիծը ժամանակ առ ժամանակ պետք է վերանայի բողոքարկման գործընթացը՝ համայնքներին մասնակից դարձնելով, և համաձայն լինի արդիականացումներին:

Հասարակական կազմակերպությունների կոնտակտային տվյալները կտրամադրվեն հեռուստատեսության, պաստառների և տեղեկատվական բուկլետների միջոցով, որոնք կբաժանվեն նախագծից տուժած համայնքներում՝ հանրային հանդիպումների ժամանակ: Հանդիպումների ժամանակ արտահայտած հարցերն ու կարծիքները կգրանցվեն և կմշակվեն ծրագրի նախագծման և իրականացման ժամանակ:

## **6.2 Ներքին շահագրգիռ կողմերի բողոքարկման մեխանիզմ**

Նախագիծը կստեղծի բողոքարկման մեխանիզմ ներքին շահագրգիռ կողմերի, ինչպես նաև թափոնների կառավարման ձեռնարկությունների աշխատակիցների համար:

### **6.2.1 Աշխատակիցների բողոքարկման մեխանիզմ**

Ելնելով ՎԶԵԲ ՏՊ2-ի բաժին 18-ից՝ Հրազդանի քաղաքապետարանը աշխատավայրում ծագած, հիմնավորված խնդիրները կարգավորելու նպատակով պարտավոր է աշխատակիցների (և այն կազմակերպությունների, որտեղ նրանք աշխատում են) համար

մշակել այդ խնդիրները կարգավորող մեխանիզմներ: Հրազդանի քաղաքապետարանը աշխատողներին այդ մասին պարտավոր է տեղեկացնել աշխատանքի ընդունման պահին, ինչպես նաև հասանելի դարձնել նրանց համար: Մեխանիզմները պետք է ներառեն կառավարման համապատասխան/պատշաճ մակարդակ և գործեն հստակ, օգտագործելով հասկանալի եւ թափանցիկ ընթացակարգ, որը անշահախնդրորեն կլուծի ստեղծված տարաձայնությունները:

Բողոքարկման մեխանիզմները չպետք է խոչընդոտեն վնասների փոխհատուցման ընթացքին այլ դատական կամ ադմինիստրատիվ կառույցներում, պետք է գործեն ըստ օրենքի կամ արբիտրաժային ընթացակարգով, եթե այդպիսիք գոյություն ունեն: Բողոքարկման մեխանիզմները կարող են փոխարինվել այլ կոլեկտիվ պայմանագրերով: ՏՊ 2-ի բաժին 19-ը նույնպես հաստատում է, որ բողոքարկման մեխանիզմները հասանելի են նաև ոչ-պայմանագրային աշխատողների համար:

Բողոքարկման մեխանիզմները պաշտոնապես ներկայացված են ՀՀ Աշխատանքային Օրենսգրքում (Հոդվածներ 25-27). Մեխանիզմները պետք է կազմեն նաև թափոնների կառավարման ձեռնարկությունների աշխատակազմի աշխատանքային պայմանագրերի մի մասը: Փաստաթղթերը պետք է կարգավորեն գործատուի ու Արհմիության դերը, իրավունքները և պարտավորությունները: Աշխատակիցներն իրենց հերթին պետք է տեղեկացված լինեն վերը նշվածի, կոլեկտիվ պայմանագրերի ժամկետների եւ համապատասխան Արհմիության Նախագահի կոնստակտային տվյալների մասին:

Համայնքային թափոնների հավաքագրմամբ զբաղվող կազմակերպությունները և աղբավայրերի տեղադրմամբ զբաղվող ռեգիոնալ ընկերությունները յուրաքանչյուր աշխատակցի հետ պետք է կազմակերպեն ներքին կարգով սահմանված ամենամյա աշխատանքի գնահատման հանդիպումներ (երկխոսություն աշխատակցի հետ):

